ՀԱՅԲԱՄԲԱԿ ՏՐԵՍՏ

ՀՐԱՀԱՆԳ

1937 ԹՎԻ ԲԱՄԲԱԿԻ ԲԵՐԴԱՀԱՎԱՌԻ ՅԵՎ ՄԹԵՐՄԱՆ ՄԱՍԻՆ



Պատ. խմբագիր՝ Ն. Ադոյան
Թարգմ.՝ Մ. Զաքարյան
Տեխ. խմբ.՝ Ի. Վարդանյան
Սրբագրիչ՝ Վ. Ա.

31 JAN 2018

ԲԱՄԲԱԿԻ 1937 ԹՎԱԿԱՆԻ ԲԵՐՔԸ ՀԱՎԱՔԵԼՈՒ ՅԵՎ ՄԹԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԺՈՂԿՈՄԽՈՐՀԻ ՅԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ Կ(Բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

Բամբակի 1937 թվականի բերքը ժամանակին ու առանց կորուստի հավաքելը և բարձրորակ բամբակ հանձնելն ապահովելու նպատակով, Հայկական ԽՍՀ Ժողկոմխորհը և Հայաստանի Կ(բ)Կ Կենտկոմը վորոշում մեն.

ա) ԲԱՄԲԱԿԻ ԲԵՐՔԸ ՀԱՎԱՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1) Հաստատել բամբակի 1937 թվականի բերքը հավաքելու և մթերելու հետևյալ պլանը՝ ըստ շրջանների.

Հոկտեմբերյանի շրջան		6275	տոննա:
Ղամարլուի	»	6035	»
Վաղարշապատի	»	5540	»
Վեդու	»	2310	»
Ընդամենը՝		20·160	տոննա:

2. Բամբակի 1937 թվականի բերքը հավաքելու և մթերելու վերջնական ժամկետը սահմանել ս. թ. դեկտեմբերի 1-ը, հետևյալ բաշխմամբ, ըստ ամիսների և տոկոսների՝ տարեկան պլանի համեմատությամբ.

ջրջգործկոմների նախագահների և Հայբամբակտրեստի կառավարչի հետ միասին.

ա) վոչ ուշ, քան մինչև սեպտեմբերի 1-ն ստուգել բոլոր գործարանների, մթերակայանների պատրաստ լինելը բամբակն ընդունելու համար, Ցերեվանի ու Հոկտեմբերյանի գործարանների փորձարկումը, ինչպես նաև նրանց պատրաստ լինելը յերկու—յերեք հերթի աշխատանքի անցնելու համար:

2. Պարտավորեցնել Հայբամբակտրեստի կառավարիչ ընկ. Ադոյանին.

ա) գործարաններում և մթերակայաններում կատարվող նոր շինարարությունը (հակերը դասավորելու հրապարակների կառուցումն ու ցանկապատումը), ինչպես նաև մերձգործարանային չորանոցների կառուցումն ու կահավորումն ավարտել մինչև սեպտեմբերի 15-ը.

բ) մինչև սեպտեմբերի 7-ն ավարտել ավտոմոբիլային տրանսպորտի վերանորոգումն այն հաշվով, որ բամբակի փոխադրությունը Վաղարշապատի մթերակայանից Ցերեվանի գործարանն ապահովվի սեփական ավտոտրանսպորտով.

գ) մինչև սեպտեմբերի 7-ն ավարտել գործարանների ու մթերակայանների հակահրդեհային սարքավորման պատրաստության ստուգումը և Արարատի, Զամարլուի, Ուլուխանլուի, Վաղարշապատի ու Եջմիածնի մթերակայանների լաբորատորիաների կահավորումը.

դ) առաջարկել Հողժողկոմատին և Կենակոմի Գյուղատնտեսական բաժնին ստուգել գործարանների, ՄՏ կայանների, մթերակայանների ու բամբակացան կոլտնտեսությունների ապահովված լինելը տեղական լեղուներով (հայերեն, ադրբեջաներեն) բամբակի հումքի նշումների ստանդարտով և նրանց եռալոններով:

3. Հանձնարարել Հայբամբակտրեստին բոլոր կոլտնտեսություններում կազմակերպել բրիգադների ու ողակավարների յերկորյա հրահանգչական խորհրդակցություններ՝ նվիրված բամբակի վորակավոր ու սորտային բերքահավաքի հարցերին:

Դրա հետ միաժամանակ կատարել բամբակ հավաքողների մանրամասն հրահանգում՝ բերքահավաքի վորակի հարցերի վերաբերյալ, ծանոթացնելով նրանց դյուրություն ունեցող եռալոնների (նմուշների) հետ:

4. Հավաքվող բամբակն ըստ արդյունաբերական տեսակների խստորեն դիֆերենցիացիայի յենթարկելն ապահովելու համար պարտավորեցնել կոլտնտեսությունների վարչություններին և գյուղխորհուրդների նախագահներին բամբակը բամբակազտիչ գործարաններին ու մթերակայաններին հանձնել՝ հանձնվող բամբակի խոնավության ու մաքրության վերաբերյալ սահմանված ստանդարտին լիովին համապատասխան:

Դաշտերից հավաքված՝ կոնդիցիոնից ավելի բարձր խոնավություն ունեցող ամբողջ բամբակը պետք է չորացվի կոլտնտեսություններում, հասցնելով այն կոնդիցիոն խոնավության:

Կտրականապես արգելել կոլտնտեսություններին, սահմանած կոնդիցիայից ավելի բարձր խոնավություն ունեցող բամբակը մթերակայաններ տանելը, իսկ մթերակայաններին՝ այդպիսի բամբակ ընդունելը:

5. Հավաքված բամբակն ըստ արդյունաբերական տեսակների դիֆերենցիացիայի յենթարկելու նշանակության և ընտիր ու առաջին տեսակի բամբակի տեսակարար կշիռը բարձրացնելու դեպքում կոլտնտեսությունների ստացած ոգուտի մասին կոլտնտեսություններում լայն բացատրական աշխատանք կատարելուն զուգընթաց, պարտավորեցնել Հայբամբակտրեստին՝ սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսների ընթացքում հինգ որը մեկ անգամ կոլտնտեսություններին տեղյակ դարձնել ըստ արդյունաբերական տեսակների մթերված բամբակի քանակության մասին, ամփոփագրեր հրա-

պարակելով հանրապետական ու շրջանային մամուլում:

6· Բամբակի ընդունումն ըստ տեսակների կատարել յուրաքանչյուր տեսակի համար սահմանված ստանդարտին խստորեն համապատասխան:

Հանձնվող բամբակի տեսակը վորոշելու հարցում ընդունողի և հանձնողի միջև տարաձայնություն ծագելու դեպքում վեճի լուծումը հանձնվում է Մթերումների կոմիտեյի շրջանային լիազորին: Պարտավորեցնել Մթերումների կոմիտեյի շրջանային լիազորին՝ չթուլացնող հսկողություն սահմանել ընդունվող բամբակի ճիշտ տեսակավորման ու կշռելու նկատմամբ, վճռական պայքար մղելով սխալ տեսակավորման ու թերակշռման դեմ:

7· Պարտավորեցնել Հողժողկոմատին՝ մինչև սեպտեմբերի 15-ը ՄՏ կայաններին, շրջանային հողբաժիններին ու կոլտնտեսություններին հրահանգ ուղարկել խոնավ բամբակը չորանոցներում չորացնելու վերաբերյալ, վերացնելով չորանոցների շինարարության ապարիզում 1936 թվականին տեղի ունեցած թերությունները:

Առաջարկել Ժողկոմխորհի Վառելանյութերի կոմիտեյին՝ մինչև հոկտեմբերի 1-ը կոլտնտեսությունների բամբակի չորանոցներն ապահովել փայտով, հետևյալ քանակությամբ՝

Հոկտեմբերյանի շրջան — 550 խոր. մետր.
Ղամարլվի շրջան — 750 խոր. մետր.
Վաղարշապատի շրջան — 450 խոր. մետր.
Վեդու շրջան — 250 խոր. մետր.
Ընդամենը — 2000 խորանարդ մետր:

8· Առաջարկել Հողժողկոմատին և բամբակացան շրջանների շրջգործկոմների նախագահներին՝ նոր չորանոցների կառուցումն ավարտել վոչ ուշ, քան մինչև սեպտեմբերի 15-ը և հների վերանորոգումը՝ վոչ ուշ, քան մինչև սեպտեմբերի 10-ը:

9· 1937 թվականի համար պահպանել բամբակի հետևյալ գները՝

Առաջին-ընտիր — 1 կիլոգրամը 1 ռուբլի 78,5 կոպեկ·

Առաջին-նորմալ — 1 կիլոգրամը 1 ռուբլի 70 կոպեկ·

Առաջին-ցածր — 1 կիլոգրամը 1 ռուբլի 61,5 կոպեկ·

Ցերկրորդ տեսակ — 1 կիլոգրամը 1 ռուբլի 44,5 կոպեկ·

Ցերրորդ տեսակ — 1 կիլոգրամը 1 ռուբլի 36 կոպեկ·

Չորրորդ տեսակ — 1 կիլոգրամը 1 ռուբլի 27,5 կոպեկ·

Հինգերորդ տեսակ — 1 կիլոգրամը 1 ռուբլի 19 կոպեկ·

10· Սահմանել, վոր մթերակայաններին բամբակ հանձնող հանդիսանում է կոլտնտեսության ներկայացուցիչը, վորը պետք է վարչությունից լիազորագիր ունենա բամբակը հանձնելու և հաշիվները կատարելու իրավունքի վերաբերյալ:

գ) ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

1· Առաջարկել Հողժողկոմատին և բամբակացան շրջանների շրջգործկոմների նախագահներին, կուսակցության շրջկոմների քարտուղարներին՝ մինչև բամբակի մասսայական բերքահավաքն սկսելը, բայց վոչ ուշ սեպտեմբերի 5-ից, անցկացնել բարձր բերքի ստախանովական վարպետների խորհրդակցություն, համատեղ քննարկելու համար հետևյալ հարցերը· աշխատանքի ու բերքահավաքի տեխնիկայի կազմակերպումը (բամբակի չանաքը յերկու ձեռքով) ամբողջ բանվորական որվա լրիվ ոգտագործումը, հավաքված բամ-

բակի փոխադրության կազմակերպումը, հողամասերի ժամանակին ընտրությունը բամբակի բերքահավաքի համար՝ ըստ սահմանված ստանդարտի և այլն:

2. Առաջարկել ՄՏ կայանների դիրեկտորներին և շրջանային հողբաժինների վարիչներին բոլոր կոլտնտեսություններում ստախանովականների մասնակցությամբ քննարկել Հողժողկոմատի կողմից ուղարկված արտադրանքի որինակելի նորմաները, հաշվի առնելով անցյալ տարվա փաստացի արտադրանքը:

Արտադրանքի նորմաները յուրաքանչյուր բերքահավաքից առաջ խստորեն դիֆերենցիացիայի յենթարկել ըստ առանձին հողամասի, նայած բերքատվությանը, բացված ու հասունացած կնդուղների քանակին:

Սահմանել, վոր բամբակի բերքահավաքի արտադրական նորմաները սերմնարուծական կոլտնտեսություններում պետք է 20—25 տոկոսով ցածր լինեն ընդունված շրջանային միջին նորմաների համեմատությամբ:

Սերմացու բամբակը հավաքելու համար առանձնացնել ամենից ավելի վորակյալ չանաքավորների:

3. Բամբակի բերքահավաքի ամբողջ աշխատանքը կազմակերպել ողակի ու բրիգադի ներսում անհատական գործավարձն անշեղորեն կիրառելու հիման վրա, վճռականորեն վերացնելով դիմազրկության ու հավասարեցման ամեն մի արտահայտություն, ապահովելով որական արտադրանքի հնգորյա գրանցումը կոլտնտեսականների ու կոլտնտեսուհիների աշխատանքային գրքույկներում:

Սահմանել, վոր ողակները բամբակը հավաքում են գյուղատնտեսական տարվա սկզբից նրանց ամրացված հողամասերում:

4. Սահմանել, վոր բամբակ հավաքող կոլտնտեսականների ու կոլտնտեսուհիների աշխատանքի վճարումն այս տարի պետք է կատարվի հավաքված բամբակի վորակին համապատասխան (տեսակավոր ցուցանիշներ): Առաջարկել Հողժողկոմատին՝ մինչև սեպտեմբերի 1-ը բամբակացան շրջաններն ապահովել բամբակի բերքահավաքը կազմակերպելու ու անցկացնելու վերաբերյալ հրահանգով, վորոշելով աշխատանքի վարձատրության չափը, ըստ հավաքած բամբակի տեսակավոր կազմի:

5. Պարտավորեցնել բամբակացան շրջանների շրջգործկոմների նախագահներին 10 որվա ընթացքում կոլտնտեսությունների հետ միասին կազմել նոր դաշտային կայանների կառուցման և հների վերանորոգման պլանը, պարտավորեցնելով կոլտնտեսությունների նախագահներին նոր դաշտային կայանների կառուցումն ու հների վերանորոգումն ավարտել վոչ ուշ, քան մինչև սեպտեմբերի 10-ը:

6. Մայր-կոլտնտեսուհիների աշխատանքի բարձր արտադրողականությունն ապահովելու համար բոլոր դաշտային կայաններում կազմակերպել մանկամսուրներ, յերեխաներին խնամելու համար առանձնացնելով պատրաստված կոլտնտեսուհիների և անհրաժեշտ քանակությամբ սննդամթերք:

դ) ՄԻԶՈՑԱՌՈՒՄՆԵՐ ՍԵՐՄԱՑՈՒ ՀՈՒՄՔԻ ՄԹԵՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

1. Պարտավորեցնել Հողժողկոմատին և Կենտկոմի գյուղատնտեսական բաժնին ստուգել ապրոբացիայի և սերմացու բամբակի բերքահավաքի համար իրականում հողամասեր առանձնացնելու ուղղությամբ կոլտնտեսություններում կատարված աշխատանքը, ժամկետ սահմանելով վոչ ուշ, քան մինչև սեպտեմբերի 5-ը:

2. Պարտավորեցնել Հողժողկոմատին, բամբակի մթերման կոմիտեին և ՄՏ կայանների դիրեկտորներին՝ սերմացու բամբակի մթերումը կոլտնտեսություններում կատարել ապրոբացիոն ակտերին խստորեն հա-

մապատասխան, բերքահավաքի ու բամբակը հանձնելու ժամանակ չթույլատրելով տարբեր խմբերի պատկանող հումքն իրար խառնելը:

3. Սերմացու հումք տվող բոլոր կոլտնտեսություններն ապահովել հատուկ յարլիկ-ետիկետկաներով, պարտավորեցնելով նրանց՝ նայած դաշտերի խմբին, յուրաքանչյուր բարդանի մեջ դնել, ինչպես նաև մթերակայանն ուղարկվող բամբակի յուրաքանչյուր բարդանի վրա դրսից փակցնել համապատասխան խմբի յարլիկը:

4. Առաջարկել Կուս-խորհրդային վերահսկողության հանձնաժողովին՝ խիստ վերահսկողություն սահմանել սերմացու բամբակի մթերման ու պահպանման կարգը ստույգ կերպով կիրառելու նկատմամբ, սահմանված կարգը խախտելու համար հանցավորներին յենթարկելով քրեական պատասխանատվության:

5. Պարտավորեցնել Հայբամբակ տրեստին՝ սերմացու հումքը հավաքելու համար կոլտնտեսություններն ապահովել հատուկ մարկիրովկայի յենթարկված տարայի կրկնակի նորմայով:

6. Առաջարկել Վաղարշապատի ՄՏ կայանի դիրեկտորին մինչև սեպտեմբերի 10-ն ավարտել ջինդաուզի լրացուցիչ կահավորումը, ծածկերի կառուցումը և չենքերի կառուցումն ելիտային-սերմնաբուծական լաբորատորիայի համար:

Առաջարկել Հայմատառին՝ ջինդաուզի լրացուցիչ կահավորման, ծածկերի կառուցումն ավարտելու և լաբորատորիաների կառուցման համար առանձնացնել յերկու վագոն անտառանյութ և յերեք վագոն կիր:

յե) ԿԱԴՐԵՐ

1. Առաջարկել Հայբամբակտրեստի կառավարիչ ընկ. Ադոյանին մինչև ս. թ. սեպտեմբերի 5-ը կուսակցության շրջկոմների հետ միասին վերանայել մթերման ցանցի բամբակ ընդունողների ու տեսակավորողների կադրերը և մթերակայաններն ապահովել ստուգված վորակյալ աշխատողներով:

2. Առաջարկել Հայբամբակտրեստին և Հողժողկոմատին մինչև սեպտեմբերի 5-ը գործարանային լաբորատորիաներին կից կազմակերպել հնգորյա դասընթաց կոլտնտեսային տեսակավորողների համար, այն հաշվով, վոր բոլոր կոլտնտեսություններն ապահովվեն տեսակավորողներով, հետևյալ քանակությամբ՝ ըստ շրջանների.

Հոկտեմբերյան շրջանի համար՝ 46 հոգի:
Ղամարլվի շրջանի համար — 64 հոգի:
Վաղարշապատի շրջանի համար — 41 հոգի:
Վեդու շրջանի համար — 25 հոգի:
Ընդամենը — 176 հոգի:

զ) ՏԱՐԱ

1. Առաջարկել Հայբամբակտրեստին.

ա) մինչև բամբակի մթերումն սկսելը լրիվ ապահովել բամբակազատիչ գործարանների տարայի պահանջը (բրեզենտներ, չպագատ և այլն):

բ) Մինչև սեպտեմբերի 1-ն ստուգել, թե մթերակայանները վորքանով են ապահովված պարկերով և վերջիններս ինչպես են բաշխված մթերակայանների միջև:

գ) Վորպես փորձ այս տարի գործածության մեջ մտցնել 5·000 հատ նոր ձևով կարված բարդաններ:

Միաժամանակ, բամբակ հավաքող կոլտնտեսականների համար հայթայթել 15 հազար գոգնոց, ապահովելով դրանց փոխադրությունը կոլտնտեսությունները վոչ ուշ, քան մինչև սեպտեմբերի 5-ը:

2. Առաջարկել Հողժողկոմատին և ՄՏ կայանների դիրեկտորներին՝ հինգ որվա ընթացքում պարզել կոլտնտեսությունների կշեռքի, ինչպես նաև կշռաքարերի

պահանջը և Հայկոոպի միջոցով կոլտնտեսություններն ապահովել անհրաժեշտ կշռաքարով:

Միաժամանակ հանձնարարել Զափ ու Կշռի պալատին մինչև սեպտեմբերի 10-ն ավարտել կշռային տնտեսության ստուգումը, ինչպես բամբակազտիչ գործարաններում ու մթերակայաններում, այնպես և բոլոր բամբակացան կոլտնտեսություններում, իսկ այնուհետև սիստեմատիկ վերահսկողություն սահմանել կշռային տնտեսության նկատմամբ:

Ե) ԲԵՐՔԱՀԱՎԱՔԻ ՈՒ ՄԹԵՐՄԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԸ

1. Առաջարկել Առողջապահության Ժողկոմատին, Լուսժողկոմատին և Ներքուժողկոմատին՝ յերեք որվա ընթացքում Ժողկոմխորհի հաստատությանը ներկայացնել այս տարվա բամբակի բերքահավաքի կամպանիայի սպասարկման ուղղությամբ կիրառվելիք միջոցառումների վերաբերյալ վորոշված նախագիծը:

2. Պարտավորեցնել Հայաստանի Ռադիոկոմիտեին, Հայկական ԽՍՀ Ժողկոմխորհին կից Արվեստի գործերի վարչությանը և Հայկական ԽՍՀ Ժողկոմխորհին կից Ֆիզկուլտուրայի ու սպորտի գործերի վարչությանը՝ յերեք որվա ընթացքում հաստատել իրենց գծով 1937 թվականի բերքահավաքի կամպանիայի սպասարկման պլանը և ապահովել պլանով նախատեսված բոլոր միջոցառումների ժամանակին կիրառումը:

3. Պարտավորեցնել «Խորհրդային Հայաստան», «Կոմունիստ» ու «Կղզի-Շաֆակ» թերթերի խմբագիրներին և բոլոր շրջանային թերթերի խմբագիրներին՝ լայնորեն լուսաբանել բամբակի բերքահավաքի ու մթերման ընթացքը, ինչպես նաև ստախանովականների աշխատանքի փորձը:

Հայկական ԽՍՀ Ժողկոմխորհը և ՀԿ(բ)Կ կենտկոմը հավատացած են, վոր շրջանային կուսակցական ու խորհրդային կազմակերպությունները, կոլտնտեսականների, կոլտնտեսուհիների ու բամբակի դաշտերի ստախանովականների լայն մասսաները պայքարելով բամբակի յուրաքանչյուր կնգուղի համար, բարձր բերքի ու լավ վորակի համար, Հոկտեմբերյան Մեծ Հեղափոխության պանծալի քսանամյակը կդիմավորեն այս տարվա բամբակի պլանի ժամկետից շուտ կատարումով ու զգալի գերակատարումով:

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԺՈՂԿՈՄԽՈՐՀ
ՀԱՅԱՍՏԱՆԻ Կ(բ)Կ ԿԵՆՏԿՈՄ

ՀՐԱՀԱՆԳ

1937 ԹՎԱԿԱՆԻ ԲԵՐՔԻ ԲԱՄԲԱԿԸ ՄԹԵՐԵԼՈՒ, ԸՆԴՈՒՆԵԼՈՒ, ՏԵՍԱԿԱՎՈՐԵԼՈՒ ՅԵՎ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Վճռականապես վերացնել անցյալ տարի տեղի ունեցած այն փաստերը, երբ մթերման կայանները, խախտելով որենքը, թույլ եյին տալիս բամբակն ընդունել պահպանման ստորադրություններով, բամբակն ընդունում եյին չատ խոնավ, վորով վնաս եյին հասցնում պետությանը»:

«Այնպես կազմակերպել բամբակի ընդունումն ու պահպանումն, վոր վոչ մի դեպքում թույլ չտրվի վորակի վատացում, բամբակի կորուստ ու փչացում գործարաններում ու մթերման կայաններում, վորի համար կազմակերպել ընդունված բամբակի վիճակի ամենորյա մանրաղննին ստուգում»: Համ Կ(բ)Կ-ի 1937 թ. հունիսի 4-ի պլենումի բանաձվից, «բերքահավաքի և գյուղատնտեսական մթերքների մասին»):

Բամբակամթերման կամպանիայի գլխավոր խնդիրներն են՝

1. Մթերել 1937 թ. բամբակի հումքի ամբողջ բերքը կոնտրակտացիոն պայմանագրերով սահմանված-ից վոչ պակաս քանակությամբ:

2. Բարելավել բամբակի հումքի վորակի տեսակավորումը:

3. Ապահովել ամբողջ բամբակի հումքի պահպանումը փչանալուց և կորուստից:

4. Մթերել բարձրորակ սերմացու:

1. ԲԱՄԲԱԿԻ ՀԱՎԱՔԸ ԴԱՇՏՈՒՄ

Բամբակի գործարաններն ու մթերման կայանները պարտավոր են —

1. Ոգնություն ցույց տալ ՄՏ կայաններին հրահանգելու կոլտնտեսություններին, բրիգադիրներին ու կոլտնտեսականներին դաշտում բամբակի հումքն ըստ տեսակների առանձին հավաքումը ճիշտ կազմակերպելու, հիվանդ և ջրասակավությունից չորացած բամբակի հումքն առանձին հավաքելու, բամբակի ստանդարտների և նրանց նմուշների (ետալոնների) ծանոթանալու, բամբակը մթերման կայաններին ժամանակին հանձնելու հարցերին, ինչպես նաև կոլտնտեսություններում հրավիրել ողակավարների յերկորյա հրահանգչական խորհրդակցություններ նույն նպատակի համար:

Յուրաքանչյուր տեսակավորողին կցել այն կոլտնտեսություններին, վորոնց բամբակը նա ընդունում է, վորպեսզի մինչև բերքահավաքը սկսելը, նույնպես ել բերքահավաքի ընթացքում նա ազատ որերը, գնա կոլտնտեսություններին համապատասխան ցուցմունքներ տալու:

2. Մինչև բամբակի բերքահավաքն սկսելը ՄՏԿ-ի ներկայացուցիչների հետ կոլտնտեսություններում ծանոթանալ բերքահավաքի ինվենտարի, փոխադրման միջոցների դրության ինչպես և կոլտնտեսական հին չորանոցների նորոգման ու նորերի կառուցման ընթացքին:

3. Հետևել, վոր դաշտում բամբակը կեղտոտելուց ապահովելու համար կոլտնտեսականներն ու մենատնտեսները հավաքած բամբակի տակ փռեն բրեզենտ-

11-284939

ներ, պարկեր և խոիրներ։ Բամբակը մթերման կայաններն ուղարկելու համար բարդանների մեջ լցնելուց առաջ, պետք է խնամքով չորացվի և մթերման կայաններին հանձնվի ստանդարտով նախատեսվածից վոչ ավելի խոնավությամբ։

4. Պարբերաբար կոլտնտեսություններն ու գյուղխորհուրդները հաճախելով և ցուցմունքներ տալով, ապահովել ամբողջ հավաքած և նորմալ խոնավության հասցված բամբակի անհապաղ մթերման կայաններին հանձնելը։

5. Զգտել, վոր կոլտնտեսային ընդունողները հավաքողներից բամբակն ընդունեն վոչ միայն ըստ քանակի, այլ և ըստ վորակի, առանձնացնելով բարձր աղբոտությամբ և խառն բամբակը մաքուրից։

6. Մթերման կայանների ու գործարանների աշխատակիցները բամբակն ընդունելով կոլտնտեսություններից ու անհատական տնտեսություններից, պարտավոր են հետևել, թե ինչպես են բամբակի հումքը հավաքում՝ ըստ հասունության, տեսակների խոնավության և մաքրության։

Սխալ տեսակավորում, խակ կամ կողմնակի խառնուրդներով աղբոտված բամբակի հավաքում նկատելու դեպքում պարտավոր են այդ մասին անմիջապես տեղեկացնել ՄՏ Կայանին և շրջանային հողբաժնին և իրենց աշխատակցին ուղարկել կոլտնտեսություն հրահանգներ տալու և թերությունները տեղում վերացնելու համար։

Այն դեպքում, յերբ կոլտնտեսությունը համապատասխան միջոցներ ձեռք չի առնում մթերման կայանի կամ գործարանի բոլոր պահանջները բամբակի մաքրության, տեսակայնության վերաբերյալ կատարելու, մթերման կայանն ու գործարանը պարտավոր են հարց հարուցել ՄՏԿ-ի և շրջանային կազմակերպությունների առաջ կոլտնտեսության վարչության վրա ներգործելու միջոցներ ձեռք առնելու համար։

Բամբակի հավաքման ու տեսակավորման կանոնները չարամտորեն խախտելու համար տվյալ անձանց գործը հանձնել դատական մարմիններին, արտադրանքը փչացնելու համար պատասխանատվության յենթարկելու նրանց։

7. Մինչև հոկտեմբերի 1-ը հին չորանոցների նորոգումն ու նորերի կառուցումն ավարտել։

Բամբակի չորացման ընթացքում պարբերաբար ստուգել նրանց աշխատանքները, ոգնելով կոլտնտեսություններին կանոնավորելու չորանոցների աշխատանքները։

8. Սերտ կապ հաստատել գյուղխորհուրդների հետ և ոգնություն ցույց տալ նրանց կազմակերպելու նաև մենատնտեսների բամբակի հավաքը դաշտում ըստ տեսակների, պարբերաբար ուղարկելով մթերման կայանի աշխատակիցներին հրահանգելու չանաքավորներին և հսկելու բամբակի վորակի ու հավաքի տեմպերին։

2. ՄԹԵՐՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐՈՒՄ ԲԱՄԲԱԿԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

9. Բամբակի մթերման ամսական պլանների համապատասխան, մթերման կայանների վարիչները պարտավոր են վոչ ուշ քան մինչև ոգոստոսի 20-ը կոլտնտեսությունների և ՄՏ Կայանների հետ քննել և հաստատել բամբակի հավաքումն ու հանձնումն ըստ հընդորյակների։

10. Բամբակի ընդունումն ու պահպանումը մթերման կայաններում կատարվելու է առանձին-առանձին, ըստ բուսաբանական տարատեսակների, արդյունաբերական տեսակների և թելիկների յերկարության։

Սերմացու հումքն ընդունվում և պահվում է վոչ սերմացու հումքից առանձին, համաձայն սերմացու բամբակի և սերմերի մթերման կանոնների։ Միևնույն

բուսաբանական տարատեսակի թելերի յերկարության ու տեսակի բամբակը պահեստում դասավորվում է մի տեղ, կազմելով մի պարտիա:

11. Տեքստիլ գործարանները թելիկի համաչափ յերկարությամբ բամբակով ապահովելու նպատակով, մթերման կայաններն ու գործարանները, բամբակն ըստ տարատեսակների, յերկարության ու տեսակի, մի պարտիայում դասավորած (պահեստ, ծածկ, բունտ), կատարելու յեն հետևյալ միջոցառումները՝

ա) Բամբակի հումքը բարդաններից դատարկելուց հետո պետք է փռել բարակ շերտով:

բ) Բամբակի հումքը բունտերից, պահեստներից, ծածկոցներից բարդանների մեջ լցնելուց հումքը պետք է վերցնել ուղղահայաց շերտով և վոչ թե հորիզոնական:

գ) Բամբակի հումքը, բացի բարձրորակ սերմացվից, չպետք է պահպանվի բարդաններում, յեթե նույնիսկ ազատ բարդաններ լինեն:

դ) Կտրականապես արգելվում է բամբակի հումքը զոման տալ ուղղակի բարդաններից:

յե) Նմուշը վերցնելու կամ բամբակը դատարկելու համար բարդանը կտրելուց պետք է հսկեն, վոր թելի (չպատի) կտորները չընկնեն բամբակի հումքի մեջ: Հումքը բարդանները լցնելու, զոման տալու ժամանակ պետք է կազմակերպել թելի կտորների ջոկում:

12. Մթերման կայան բերված ամբողջ բամբակը պետք է ընդունվի նույն որը:

Ընդունելությունը վերջանալուց հետո բերված և չընդունված բամբակի հումքի համար տրվում են ժամանակավոր ստացականներ՝ հնիշատակելով բարդանների թիվը: Այդ բամբակի պահպանման համար մթերման կայանը պետք է հատկացնի հատուկ տեղ: Նույն բամբակի ընդունումն ու նրա հաշվառքումը կատարվում է հետևյալ առավոտյան:

13. Բամբակի հումքի ընդունումն անպայման կատարվում է կոլտնտեսության լիազորի ներկայությամբ, վորը գրավոր լիազորություն պիտի ունենա հանձնելու հաշվառքում ստանալու վերաբերյալ, իսկ մենատնտեսների բամբակը ընդունվում է բամբակատիրոջ ներկայությամբ:

14. Բամբակը կշռելուց հետո տեսակավորողը գրում է մի որինակ որդեր և ուղարկում գրասենյակ, հաշվառքում կատարելու համար: Հաշվապահը կամ հաշվետարը լրացնում է բուն որդերի հաշվառքային մասը, գրանցում է հաշվառքային գրքի մեջ և մթերման կայանի վարիչի ստորագրությամբ կտրոնը հաշվեգրքույկի հետ միասին հանձնում Պետբանկի հաշվառքային դրամարկղին:

15. Թերակշռման դեմ պայքարելու նպատակով մթերման կայանի վարիչը ամեն որ ընդունելուց առաջ, ինչպես և ընդունելու ընթացքում կշեռքը ստուգում է ստուգիչ կշռաքարերով: Ստուգումը պետք է կատարվի կոլտնտեսությունների ներկայացուցիչների ներկայությամբ: Կշեռքի ստուգումը անպայման դրանցվում է հատուկ գրքի մեջ, ստուգումը կատարած անձանց, այդ թվում նաև ստուգմանը մասնակցող կոլտնտեսության ներկայացուցչի ստորագրությամբ:

16. Բամբակի տեսակի վորոշումը կատարվում է բարդանի խորքից հանած վոչ պակաս, քան 400–500 գր. բամբակի նմուշը համեմատելով ստանդարտի եռալոնների հետ: Բամբակ հանձնողի և մթերման կայանի ընդունողի միջև վորակի վերաբերյալ տարաձայնություն առաջանալու դեպքում՝ տեսակի, կարգի, ինչպես և խոնավության ու աղբոտության վերաբերյալ, վեճը լուծվում է մթերման կայանի կամ գործարանի լաբորատորիայի միջոցով: Մթերման կայանի կամ գործարանի լաբորատորիայի համար տեսակն ու կարգը վորոշելու նպատակով նմուշները հանվում են այնպես, վոր նա տիպիկ նմուշ լինի և իրենով արտացոլի

վիճելի ամբողջ պարտիա բամբակի վորակը: Այդպիսի նմուշի չափը պետք է լինի վոչ պակաս քան յերկու կիլոգրամ: Խոնավության վերաբերյալ նույնպես ընդունվում է տիպիկ նմուշ 400 գրամից վոչ պակաս, և հատուկ բանկայի մեջ ուղարկվում է լաբորատորիային՝ յեզրակացություն տալու համար:

Ինչպես տեսակի, նույնպես ել խոնավության վերաբերյալ լաբորատորիայի տված յեզրակացությունը հիմք է հանդիսանում հաշվառքման համար:

Հանձնվող բամբակի հումքի միատեսակության վերաբերյալ կասկած լինելու դեպքում բարդանի տարբեր տեղերից հանվում է յերկու նմուշ: Բամբակի մեջ խառնուրդ հայտնաբերելու դեպքում, հանձնողը պարտավոր է վերատեսակավորել բամբակը, իսկ յեթե նա հրաժարվի վերատեսակավորումից, բամբակի հումքը պետք է ընդունվի խառնուրդի մեջ յերեվան հանված ցածր տեսակով:

17. Անհրաժեշտ է՝ տեսակավորողները ստուգեն բամբակաթելի ամրությունը և վեճի դեպքում նմուշները հանձնեն լաբորատորիային՝ անալիզի յենթարկելու բամբակի հասունության ու ամրության համար:

18. Բամբակի ընդունելությունը կատարվում է միայն ցերեկվա լույսով. յերեկոյան արհեստական լույսով բամբակ ընդունելը կտրականապես արգելվում է:

19. Նմուշ հանելու համար բարդանի կարած տեղից արձակում, կամ քանդում են 20–25 սմ. ապա գնելուց և տեսակը վորոշելուց հետո բամբակի նմուշը հետ են դնում բարդանի մեջ:

20. Բոլոր մթերման կայաններում պետք է լինեն բոլոր տեսակների ու դասերի բամբակի հումքի նմուշները (ետալոններ): Նմուշները պետք է տրամադրել բամբակ հանձնողներին՝ գնելու և իրենց հանձնելիք բամբակը նրա հետ համեմատելու համար: Բամբակի ստանդարտների նկարագրությունը թարգմանված հայերեն ու ադրբեջանական լեզուներով պետք է կախվեն

չրջանակների մեջ աչքի ընկնող տեղերից բամբակը ընդունելու վայրերում, նույնպես և պետք է բաժանվեն կոլտնտեսությունների բոլոր բրիգադավարներին: Առանց բարդանից նմուշ հանելու, բամբակն ընդունելն արգելվում է: Այն անձինք, վորոնք ընդունում են առանց յուրաքանչյուր բարդանից նմուշներ հանելու, պատասխանատվության են յենթարկվում իբրև արտադրանքը փչացնողներ, ԽՍՀՄ–ի Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1933 թ. դեկտեմբերի 8–ի՝ «անորակ արտադրանքի համար պատասխանատվության յենթարկելու մասին» վորոշման համաձայն:

21. Բամբակի հումքի համար սահմանված այն խոնավության տոկոսը, վորի համաձայն թույլատրվում է բամբակն ընդունել ըստ առանձին տեսակների, վորոշվում է սահմանված ստանդարտի ու կոնտրակտացիոն պայմանագրերի համաձայն, այն է՝

Ընտիր և առաջին տեսակի նորմալ մինչև	9	տոկոս
Առաջին ցածր տեսակի	10	»
Յերկրորդ տեսակի	11	»
Յերրորդ տեսակի	12	»
Չորրորդ տեսակի	13	»
Հինգերորդ տեսակի	14	»

Սահմանված կոնդիցիայից բարձր խոնավությամբ բերված բամբակը վերադարձվում է հանձնողին՝ չորացնելու համար: Ստանդարտից բարձր խոնավությամբ ընդունելու համար մեղավորները յենթարկվում են քրեական պատասխանատվության, ինչպես պետական սոցիալիստական դույքը փչացնողների:

22. Բարձր աղբոտությամբ բամբակ ընդունելիս բամբակի քաշից դուրս գալ աղբոտության դիմաց այն չափով, վորն ավելի յե քան ԽՍՀՄ–ի Ժողկոմխորհի 1935 թ. նոյեմբերի 4–ի № 1952 վորոշմամբ սահմանված նորմայից ըստ տեսակների (բամբակի քաշից %–ով):

Առաջին տեսակի ընտիր —	0,25
Առաջին տեսակի նորմալ —	0,4
Առաջին ցածր տեսակի —	0,5
Երկրորդ տեսակի—	1,0
Երրորդ տեսակի —	1,5
Չորրորդ տեսակի —	2,5
Հինգերորդ տեսակի —	3,5

Տեսակավորողի և բամբակ հանձնողի միջև բամբակի աղբոտությունը վորոշելու վերաբերյալ տարաձայնություն ծագելու դեպքում վիճելի պարտությից նմուշ են վերցնում և հանձնում մթերման կայանին կամ գործարանի լաբորատորիային անալիզի համար: Մինչև լաբորատորիայից անալիզը ստանալը բամբակը ընդունվում և հաշվվում է տեսակավորողի վորոշմամբ: Կոլտնտեսության հետ հաշվառքումը կատարվում է յերկու որվա ընթացքում, լաբորատորիայից ստացած անալիզի հիման վրա:

23. Բամբակի հումքն ընդունողը պարտավոր է ընդունելիս ընդունման որդերի մեջ հիշատակել ընդունված հումքի խոնավության ու աղբոտության տոկոսները:

24. Կտրականապես արգելվում է բամբակն ընդունել թողնելով այն բամբակը հանձնողների մոտ պահպանման վերաբերյալ ստորագրություններով (под сохранной записки): Պահպանման ստորագրություններով, ընդունված բամբակի ընդունման որդերները գործարանների ու մթերման կայանների հաշվապահները հաշվառքման չեն ընդունում և չեն գրանցում պլանի կատարման դիմաց: Պահպանման ստորագրություններով բամբակն ընդունելու մեջ մեղավորները յենթարկվում են քրեական պատասխանատվության:

25. Ջրասակավությունից չորացած, ինչպես և վնասատուներից տուժած (չիրա, չոռ, հոմոզ և այլն) բամբակի հումքն ընդունվում, պահպանվում ու գործարանին են ուղարկում նորմալ չորացած բամբակից ջոկ:

26. Գործարանները, մթերման կայանները պարտավոր են կոլտնտեսություններից ընդունել բամբակի չբացված կնդուղները, համաձայն ԽՍՀՄ-ի Ժողկոմխորհին կից մթերման կոմիտեի 1936 թ. նոյեմբերի 15-ի № 42-23 վորոշման:

3. ԲԱՄԲԱԿԻ ՀՈՒՄՔԻ ԽՈՆԱՎՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԱՂԲՈՏՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՈՒՄԸ

27. Տեսակավորողների կողմից բամբակի խոնավությունն ու աղբոտությունը վորոշելու ճշտությունը ստուգելու համար սահմանվում է ընդունված բամբակի խոնավության ու աղբոտության լաբորատորիական վերահսկողություն:

ա. Լաբորատորիա ունեցող մթերման կայանների համար ընդունվող բամբակի խոնավության աղբոտության ստուգումը կատարվում է ընդունման որը: Խոնավության և աղբոտության ստուգման համար, բամբակի նմուշները վերցվում են ամեն որ:

բ. Բամբակի նմուշները վերցվում են ընդունման մոմենտին և անմիջապես հանձնվում մթերման կայանի լաբորատորիային՝ անալիզի համար, կամ ուղարկվում գործարանային լաբորատորիային:

գ. Բամբակը գործարանային լաբորատորիային ուղարկվում է հատուկ ապակյա բանկաներով, վորոնք ամուր փակվում են խցաններով:

Բանկաներ չլինելու դեպքում նմուշներն ուղարկվում են պերգամենտե թղթի մեջ փաթաթած: Բամբակի նմուշի մեջ դրվում է պիտակ (յարլիկ), նշելով բամբակի տեսակի բուսաբանական ու տարատեսակը, ուղարկված նմուշի ճիշտ քաշը, բամբակի ընդունելու ամիսն ու ամսաթիվը, նմուշ վերցնելու ամիսը, ամսաթիվն ու ժամը: Բամբակի խոնավության ու աղբոտու-

Առաջին տեսակի ընտիր —	0,25
Առաջին տեսակի նորմալ —	0,4
Առաջին ցածր տեսակի —	0,5
Յերկրորդ տեսակի—	1,0
Յերրորդ տեսակի —	1,5
Չորրորդ տեսակի —	2,5
Հինգերորդ տեսակի —	3,5

Տեսակավորողի և բամբակ հանձնողի միջև բամբակի աղբոտությունը վորոշելու վերաբերյալ տարաձայնություն ծագելու դեպքում վիճելի պարտիայից նմուշ են վերցնում և հանձնում մթերման կայանին կամ գործարանի լաբորատորիային անալիզի համար: Մինչև լաբորատորիայից անալիզը ստանալը բամբակը ընդունվում և հաշվվում է տեսակավորողի վորոշմամբ: Կոլտնտեսության հետ հաշվառքումը կատարվում է յերկու որվա ընթացքում, լաբորատորիայից ստացած անալիզի հիման վրա:

23. Բամբակի հումքն ընդունողը պարտավոր է ընդունելիս ընդունման որդերի մեջ հիշատակել ընդունված հումքի խոնավության ու աղբոտության տոկոսները:

24. Կարականապես արգելվում է բամբակն ընդունել թողնելով այն բամբակը հանձնողների մոտ պահպանման վերաբերյալ ստորագրություններով (под сохранной записки): Պահպանման ստորագրություններով, ընդունված բամբակի ընդունման որդերները գործարանների ու մթերման կայանների հաշվապահները հաշվառման չեն ընդունում և չեն գրանցում պլանի կատարման դիմաց: Պահպանման ստորագրություններով բամբակն ընդունելու մեջ մեղավորները յենթարկվում են քրեական պատասխանատվության:

25. Զրասակավությունից չորացած, ինչպես և վնասատուներից տուժած (չիրա, չոռ, հոմոզ և այլն) բամբակի հումքն ընդունվում, պահպանվում ու գործարանին են ուղարկում նորմալ չորացած բամբակից ջոկ:

26. Գործարանները, մթերման կայանները պարտավոր են կոլտնտեսություններից ընդունել բամբակի չբացված կնդուղները, համաձայն ԽՍՀՄ-ի ԺողկոմԽորհին կից մթերման կոմիտեյի 1936 թ. նոյեմբերի 15-ի № 42-23 վորոշման:

3. ԲԱՄԲԱԿԻ ՀՈՒՄՔԻ ԽՈՆԱՎՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԱՂԲՈՏՈՒԹՅԱՆ ՍՏՈՒԳՈՒՄԸ

27. Տեսակավորողների կողմից բամբակի խոնավությունն ու աղբոտությունը վորոշելու ճշտությունը ստուգելու համար սահմանվում է ընդունված բամբակի խոնավության ու աղբոտության լաբորատորիական վերահսկողություն:

ա. Լաբորատորիա ունեցող մթերման կայանների համար ընդունվող բամբակի խոնավության աղբոտության ստուգումը կատարվում է ընդունման որը: Խոնավության և աղբոտության ստուգման համար, բամբակի նմուշները վերցվում են ամեն որ:

բ. Բամբակի նմուշները վերցվում են ընդունման մոմենտին և անմիջապես հանձնվում մթերման կայանի լաբորատորիային՝ անալիզի համար, կամ ուղարկվում գործարանային լաբորատորիային:

գ. Բամբակը գործարանային լաբորատորիային ուղարկվում է հատուկ ապակյա բանկաներով, վորոնք ամուր փակվում են խցաններով:

Բանկաներ չլինելու դեպքում նմուշներն ուղարկվում են պերգամենտե թղթի մեջ փաթաթած: Բամբակի նմուշի մեջ դրվում է պիտակ (յարլիկ), նշելով բամբակի տեսակի բուսաբանական ու տարատեսակը, ուղարկված նմուշի ճիշտ քաշը, բամբակի ընդունելու ամիսն ու ամսաթիվը, նմուշ վերցնելու ամիսը, ամսաթիվն ու ժամը: Բամբակի խոնավության ու աղբոտու-

թյան ստուգման արդյունքն ստորագրությամբ հաղորդվում է ընդունողին անալիզն ստանալու որը:

4. ԳՆԵՐՆ ԸՍՏ ՏԵՍԱԿՆԵՐԻ

28. 1937 թ. բամբակի բերքի հումքն ընդունել ըստ տեսակների հետևյալ գներով (ռուբլիներով յուրաքանչյուր տոննին).

Արժեքը ռուբլիներով.

1-ին ընտիր	1785
1-ին նորմալ	1700
1-ին ցածր	1615
2-րդ տեսակ	1445
3-րդ տեսակ	1360
4-րդ տեսակ	1275
5-րդ տեսակ	1190

29. Վոչ ստանդարտային բամբակի հումքի համար, վորից կարող է ստացվել ցածորակ բամբակ, (վատա) վճարել յուրաքանչյուր տոննի համար 190 ռ.: Ընդունված վոչ ստանդարտային բամբակը չի հաշվվում բամբակի մթերման պլանի դիմաց, չի ապրանքավորվում (բուսական յուղով, վատալենտերով, քուսպով), և նրա համար պարգև հավելում չի վճարվում:

5. ՏԱՐԱՅԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ

30. Կոլտնտեսություններին ու անհատական տնտեսություններին տրվող համբողջ տարան պետք է լրիվ պատրաստ լինի (կարված, վերանորոգված) և մթերման կայանները հասցվի վոչ ուշ, քան 1937 թվի ոգոստոսի 20-ը:

Նկատի ունենալով, վոր կարթեր (կեռ) ոգտագործելիս բարդանները բավականաչափ փչանում են, անհրաժեշտ է բարդանները կարելիս անկյուններում ականջիկներ թողնել: Նման ականջիկներ թողնել նաև բամբակով լցված բարդանների բերանները կարելիս:

Բարդանները բաշխել յուրաքանչյուր կոլտնտեսության և մենատնտեսների ըստ հումքի տոննայի, բամբակի բերքահավաքի և հանձնման հնգորյա պլանի համաձայն:

31. Մթերման կայանները բամբակ հանձնողներին բարդան տալիս են կարած և նորոգված վիճակում: Պատռված, կամ բամբակ տեղափոխելու համար անպետք տարա հանձնելը կտրականապես արգելվում է:

32. Ցելնելով մի բարդանի համար վոչ պակաս քան 10 չրջանառություն ապահովելու անհրաժեշտությունից, սահմանել բամբակի փաստական բերքի մի տոննայի համար յերկու բարդան տալու միջին նորման, չերտավորելով ըստ կոլխոզների հեռավորության:

33. Բարդանները բաշխելիս հայտարարել և պահանջել կոլտնտեսություններից ու մենատնտեսներից, վորպեսզի բամբակը բարդանների մեջ սեղմ լցնեն, այն հաշվով, վոր 3 մետր կտորից կարված բարդանում լցվի վոչ պակաս, քան 85 կիլոգրամ բամբակ, իսկ 2,7 մետրից՝ 75 կ.գ.:

34. Մթերման կայանների վարիչները պարտավոր են մինչև սեզոնի սկիզբը հավաքել անցյալ տարվանից կոլտնտեսությունների ու մենատնտեսների մոտ մնացած բամբակի բարդաններն ու սերմացուի պարկերը:

35. Զվերադարձված բարդանների և պարկերի համար գանձվում է նրանց արժեքը հնգապատիկ: Կոլտնտեսություններին ու մենատնտեսներին բարդաններ տալիս հայտարարել բարդանները վերադարձնելու պարտադիր ժամկետն, ինչպես և արժեքը, վոր պետք է գանձվի բարդանները կորչելու կամ փչացնելու համար:

36. Բարդանը կարող է անել 10 չրջանառություն և

ավելին, միայն նրա հետ խնամքով վերաբերվելու դեպքում: Բարդանները ոգտագործելիս արգելել՝

ա) բամբակով լցված բարդանը կարթերով բարձրացնելը,

բ) բամբակով լցված բարդանները սայլերից, պլատֆորմից և բունտի վրայից գետին չպրտելը,

գ) բամբակով լցված բարդանները խոնավ գետնին թողնելն առանց տակն ապանրքակալներ դնելու,

դ) խոնավ բարդանները իրար վրա դարսելը, կամ պահեստները լցնելը,

յե) կոլտնտեսությունները պարտավոր են վերացնել սայլերի վրայից այն սուր մասերը, վորոնք պատռում կամ ծակում են բարդանները:

37. Բամբակը բարդանների մեջ լցնելու և բունտեր դնելու աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու նպատակով բոլոր գործարաններում ու մթերման կայաններում պատրաստել պարզ դաղդահներ (յեռոտանիներ) բամբակը լցնելու համար, ինչպես նաև բամբակը բունտեր դնելու համար պատրաստել լայն սանդուխքներ (տրասներ) և հասարակ ամբարձիչներ:

38. Բամբակ հանձնողներին բարդանները տրվում են բացառապես մթերման կայանի դրասենյակի որդերներով: Լիք բամբակով բերված բարդանները համարվում են տրված բարդանների դիմաց, իբրև պարտքի մարում, իսկ կրկին անգամ բարդաններ տրվում են նմանապես դրասենյակի որդերներով պահեստից:

Ծանոթություն.— Սեփական տարայով բամբակ հանձնողներին վճարվում է, վորպես բարդանների ամորտիզացիա, բամբակի յուրաքանչյուր կիլոգրամի դիմաց մեկ կոպեկ, նմանապես մեկական կոպեկ կիլոգրամին վճարվում է բամբակն առանց տարայի տեղափոխելու համար:

39. Սեզոնի սկզբին մաշված տարան ուղարկվում է գործարաններին հակերը փաթաթելու համար: Այն

տարան, վորը թեկուզ մեկ անգամ շրջանառության համար պիտանի յե, չի կարելի ոգտագործել բամբակի հակի փաթաթման համար, այլ պետք է վերանորոգվի և ուղարկվի բամբակ լցնելու համար:

6. ԲԱՄԲԱԿԻ ՀՈՒՄՔԻ ԴԱՍԱՎՈՐՈՒՄԸ ՊԱՀԵՍՏՆԵՐՈՒՄ ՅԵՎ ԲՈՒՆՏԵՐ ԴՆԵԼԸ

40. Բոլոր պահեստային շենքերը մինչև սեզոնի սկիզբը պետք է նորոգվեն, ոգտագործվեն և չորացվեն: Անհրաժեշտ է մանրաղնին ստուգել հատակների, պատերի և տանիքների դրությունը. բոլոր թափթփվող պատերը, փոշոտ, խորդ ու բորդ հատակները պետք է նորոգվեն այն հաշվով, վոր թափված բամբակը չը խառնվի փոշու, մանր քարերի և աղբի հետ: Հատակները պետք է սալահատակվեն: Այնտեղ վորտեղ հնարավորություն չկա հատակը պատշաճ կերպով կարգի բերելու, ինչպես նաև խոնավ հատակ ունեցող պահեստներում անհրաժեշտ է ունենալ տակը փռելու խսիրներ, կամ չաթաններ: Բացոդյա բունտերի շուրջը պետք է առուներ փորել, վորպեսզի ջուրը չանցնի բունտերի տակը:

41. Մինչև ոգոստոսի 25-ը յուրաքանչյուր մթերման կայան պետք է կազմի բամբակի պահպանման ոպերատիվ պլան: Պլանով պետք է նախատեսվի պահեստի ծածկերի ու բակերի տարածության ոգտագործման կարգը: Առաջին հերթին պահեստային շենքերով պետք է ապահովվի 95 և ավելի տոկոսայնություն ունեցող սերմացուն:

Ծանոթություն.— Պահեստային շենքերի ոգտագործման պլանը կազմելիս անհրաժեշտ է հաշվի առնել ցածր տեսակները ծածկած շենքերով ապահովելը: Բոլոր պահեստներն ու ծածկերը պետք է բաժանվեն ըստ հումքի տեսակների ու յերկարության:

42. Բամբակի հումքի պահպանման և գործարան

փոխադրելու պլանը կազմելիս, պետք է հաշվի առնել գործարանի աշխատանքը բամբակի հումքի այնպիսի տեսակներով ապահովելու անհրաժեշտությունը, որը հնարավորություն տա գտած բամբակի արտադրումը կատարել նրա բարձման պլանի համապատասխան:

Բակի տարածությունը պետք է բաժանել մասերի, վերոշելով բունտերի տեղը և բամբակի հումքն ընդունելու կետերը:

43. Բրեզենտները, ապրանքակալները, տախտակները և հատակին փռելու այլ պարագաները պետք է պատրաստ լինեն մինչև ոգոստոսի 15-ը:

44. Ամբողջ հումքը պահեստներում և ծածկերի տակ չտեղավորվելու դեպքում բունտեր են դրվում բացոթյա հրապարակում: Բունտեր դնելու համար անհրաժեշտ է ընտրել բարձր տեղ (հրապարակ) և շուրջն առու փորել, ջուրը հոսելու համար:

Մեծ բունտերը պետք է դնել 400–500 և մանրերը՝ 160–200 տոնն բամբակի հումքից, յելնելով նոյն տեսակի քանակությունից և բունտ դնելու ժամանակից: Փոքր բունտի համար հրապարակի հիմքը պետք է հավասար լինի մոտավորապես 12×16 մետրի, իսկ մեծ բունտերի համար՝ 24×18 մետրի:

45. Բունտերը դնել սալահատակված հրապարակում, չոր ժամանակ: Բունտեր դնելն անհրաժեշտ է վերջացնել մինչև հոկտեմբերի 25-ը: Հարկավոր է հետեվել, որ բամբակը պահեստների և բունտերի մեջ լցվի միայն չոր վիճակում, նաև բամբակի մեջ բարդաններ չմնան: Բամբակը բունտի մեջ կամ պահեստները տանելիս, բանվորների վոտքերի տակ տախտակներ փռել, վորպեսզի վոտքերով խոնավություն և կեղտ չտանեն բամբակի մեջ: Զլրացված բունտերը դիշերը, նաև ցերեկը անձրևի ու ձյան ժամանակ, պետք է խնամքով ծածկվեն բրեզենտներով: Բոլոր դրված վերջացրած բունտերը անպատման պետք է ծածկվեն բրեզենտներով այնպես, որ բրեզենտը բունտի կողերից կախվի վոչ պակաս քան 3–4 մետր: Բրեզենտները բունտի վրա փոսեր ու ծալքեր չպիտի ունենան, վորտեղ կարող է ջուր կուտակվել, այլ պետք է ձգված լինեն և պարանով կապված հատուկ սեպերից, գոյացնելով բունտերի վրա յերկու-յերեք կամ քառաթեք վրանի տեսք:

46. Գործարաններն ու մթերման կայանները պարտավոր են մթերման սեկտորի ցուցմունքներով լայն կիրառել բունտերն առանց կողքերը բարդան շարելու (առանց աբորտովկայի) դնելու:

47. Գործարանները ու մթերման կայանները բամբակը ծածկերն ու բունտերի մեջ լցնելիս պարտավոր են կիրառել բամբակի մեքենայական բեռնում և բեռնաթափում, պատրաստելով հատուկ հարմարություններ:

48. Ցածր տեսակների պահպանումը կատարվում է բացառապես ծածկերի տակ փռված վիճակում: Փրոված բամբակի բարձրությունը սահմանվում է կես մետրից մինչև մեկ մետր, այն հաշվով, որ կարելի լինի բամբակը շրջել: Ընդունված և բունտերում ու ծածկերի տակ դասավորված բամբակի պահպանման համար պատասխանատու յե տեսակավորողը:

49. Բամբակի տաքացումը կանխելու և պահպանվող բամբակի դրությանը լավագույն կերպով հսկելու համար հումքը բունտերում, պահեստներում և ծածկերի տակ դասավորելիս նրանց մեջ դրվում են տախտակից հավաքովի տոնելներ և անցքեր, ինչպես նաև դրվում են չոչափուկներ կլոր յերկաթից կամ խողովակներից կես դյումից մինչև մեկ դյում արամադրով, կամ ջերմաչոչափուկներ: Չոչափուկները դնել ուղղահայաց և հորիզոնական դիրքով: Պարբերաբար չոչափուկները հանվում է չոչափելու միջոցով պարզվում է բամբակի բունտերի մեջ տաքանալու չափը:

50. Ապրանքագետները, տեսակավորողները, մթերման կայանի վարիչներն ու գործարանի դիրեկտորները պարտավոր են ամեն որ խնամքով ստուգել բունտերի

և պահեստների բամբակի վիճակը։ Բունտերում ու պահեստներում պահվող բամբակի ստուգումը դրանցելու համար պահվում է հատուկ գիրք, վորտեղ մրցվում են ստուգման արդյունքները։ Ցերբ հայտնաբերվի, վոր բամբակը պահեստում կամ բունտերի մեջ տաքանում է, դարսած բամբակը պետք է անմիջապես քանդել, ջոկել տաքացած բամբակը և բարակ շերտով փռել ծածկի տակ, ամբողջ ժամանակ շրջելով մինչև հովանալը։ Քանդված բունտի, պահեստի չտաքացած բամբակը, յեթե ունի նորմալ խոնավություն, պետք է դասավորել և պահել սովորական կարգով։

51. Պահեստներում ծածկերի տակ և բացոթյա բունտերում պահվող բամբակի հաշվառումը կատարվում է առանձին պահեստային գրքում, վորտեղ բամբակի յուրաքանչյուր պարտիայի համար պետք է պահվի առանձին հաշիվ, նշելով պահեստի կամ բունտի համարը, բամբակի բուսաբանական տարատեսակը, արդյունաբերական տեսակը, դասն ու յերկարությունը, ամսաթիվը ու հումքի քանակը։ Բամբակի բունտերի վրա աչքի ընկնող տեղում, ամրացված տախտակի վրա գրվում է բունտի համարը, այն ինչ գրանցված է պահեստային գրքում, հումքի տեսակը, դասն ու յերկարությունը, խոնավությունը, բուսաբանական տարատեսակը, նաև բունտը սկսելու և վերջացնելու ամսաթիվը։

Պահեստային գիրքը վարում է մթերման կայանի գրասենյակի հաշվետարը՝ տեսակավորողի տված ամենորյա տեղեկությունների համաձայն։

7. ԲԱՄԲԱԿԻ ՓՈԽԱԴՐՈՒՄՆ ԱՌԱՆՑ ՏԱՐԱՅԻ

52. Ցերեվանի գործարանը պարտավոր է Վաղպատի գնման կայանից վոչ սերմային հումքը գործարան փոխադրել առանց տարայի, վորի համար առաջարկվում է մինչև սեպտեմբերի 5-ը դրա համար

սարքավորել իր ավտո մեքենաները, բեռնակշեռքը, նաև ստեղծել հարմարություններ հումքն ավտոմեքենաներից բեռնաթափելու ծածկերի մեջ, կամ բունտերի վրա լցնելու ոդաքաշի (պնեվմատիկայի) միջոցով։ Կոլտնտեսությունները առանց տարայի մթերման կայաններն են տեղափոխում այն հումքը, վորը ապրորացիայի ժամանակ ճանաչված է վոչ սերմային։

53. Բամբակն առանց տարա տեղափոխող ավտոմեքենաներից ու սայլերից բեռնաթափելու, կշռելու և բունտի վրա տեղափոխելու համար պատրաստել հատուկ կողովներ ու արկղներ՝ դրված պատգարակների (նասիլկաների) վրա։

54. Բամբակն առանց տարայի կոլտնտեսություններից մինչև մթերման կայանները տեղափոխելու համար, անհրաժեշտ է անհապաղ պայմանագրեր կնքել կոլտնտեսությունների հետ, այդ առթիվ պայմանագրով նախատեսելով տրանսպորտի այն սարքավորումը, վորը պետք է պատրաստի կոլտնտեսությունը (չափաններ պատրաստելն ու նրանց ամրացումը սայլերի վրա, կամ արկղներ չինելը սայլերի վրա բամբակ լցնելու համար, այն հաշվով, վոր լրիվ ոգտագործվի սայլի բեռնատարությունը)։

55. Տեղափոխելիս բամբակը թրջվելուց, կեղտոտվելուց ու պոկասելուց պահպանելու համար յուրաքանչյուր մեքենայի վրա պետք է ամրացնել հատուկ բրեզենտներ՝ բամբակը ծածկելու համար, այնպես, վոր բրեզենտը մեքենայի բոլոր կողմերից կախված լինի վոչ պակաս քան 10–15 սմ.։ Բրեզենտի ծայրերին պետք է չինել հատուկ ողակներ, վորոնցով նա ամրացվի մեքենայի կողքերին։ Առանց տարայի բամբակ տեղափոխող ավտո մեքենաները ծածկելու համար, բրեզենտները պետք է պատրաստվեն կամ գործարաններում յեղած բրեզենտի կտորներից, կամ բունտեր ծածկելու համար անպետք դարձած մեծ բրեզենտների ոգտագործելի մասերից։

8· ԲԱՄԲԱԿԻ ՓՈԽԱԴՐՈՒՄԸ

56· Կոլտնտեսություններն ու մենատնտեսները բամբակը մթերման կայաններն են փոխադրում իրենց տրանսպորտով: Տարածությունը մինչև գնման կայանը 15 կիլոմետրից ավելի լինելու դեպքում, բամբակ հանձնող կոլտնտեսություններին ու մենատնտեսներին փոխադրելու համար վճարվում է կառավարության սահմանած դրույքներով յուրաքանչյուր նորմայից ավել տոննա–կիլոմետրի համար: Վերև նշված ավել տարածության համար վճարումը կատարվում է ընդունված բամբակի հաշվառքը կատարելու հետ միաժամանակ:

57· Բամբակի գործարանների դիրեկտորներն ու գնման կայանի վարիչները պարտավոր են՝

ա) Համապատասխան շրջգործկոմների և գյուղխորհուրդների միջոցով ժամանակին նորոգել տալ մինչև գործարաններն ու մթերման կայանները բամբակի փոխադրման բոլոր ճանապարհները և կամուրջները:

բ) Վոչ ուշ քան մինչև ոգոստոսի 25–ը ավարտել ավտոմեքենաների վերանորոգումը:

գ) Վերանորոգել աշխատանքի համար պիտանի բոլոր պակրիչկաներն ու կամերները (վուլկանիզացիայի յենթարկել):

58· Բամբակի տեղափոխումը մեքենաներով ու յերկաթուղով կատարվում է միատեսակ պարտիաներով՝ ըստ տեսակի, դասի, յերկարության ու բուսաբանական տարատեսակի: Զանազան տեսակների, դասի ու յերկարության բամբակը մի պարտիայի մեջ փոխադրելը թույլատրվում է միայն բամբակի մնացորդը տեղափոխելիս: Բամբակը տեղափոխվում է չպատռոտված բարդաններով: Ուղարկվող յուրաքանչյուր բարդանի վրա գրվում է բամբակի տեսակն ու քաշը: Բամբակը մթերման կայաններից յերկաթուղով ուղարկելիս, յուրաքանչյուր դռան արտաքին կողմից և ներսից, կամ բարդանների վրա, յեթե պլատֆորմ է, յերկու կողմից, կպցվում են պիտակ (ետիկետ) նշելով ուղարկող մթերման կայանը, ստացող բամբակագործարանը, բամբակի տարատեսակը, տեսակն ու դասը:

59· Բամբակը ուղարկելիս գրվում է յերեք ֆակտուրա, վորոնցից մեկը մնում է ուղարկող մթերման կայանին, իսկ յերկուսը ուղարկվում է գործարան: Գործարանը բամբակը ընդունելիս դրանցից մեկը վերադարձնում է մթերման կայանին, վոչ ուշ յերկու որվա ընթացքում վավերացնելով ստացած հումքի ֆակտուրան:

60· Մթերման կայաններից ինչպես մեքենաներով, այնպես ել յերկաթուղիով, գործարան ուղարկվող ամբողջ բամբակը պետք է վերակշռել:

61· Գործարաններն ու մթերման կայանները պարտավոր են հսկողություն սահմանել բամբակն ըստ տեսակների, յերկարության ու տարատեսակների վագոնները բարձելու վրա, ինչպես և այդ բամբակը գործարանում ընդունելիս ապահովել բեռնաթափումն ըստ տեսակների, յերկարության և տարատեսակների:

9· ԿՈՆՏՐԱԿՏԱՑԻՈՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՍՏՈՒԳՈՒՄԸ

62· Սկսած հոկտեմբերի 1–ից մթերման կայանների վարիչները կազմակերպում են կոնտրակտացիոն պայմանագրերի ստուգումը՝ կոլտնտեսությունների ու մենատնտեսների կողմից բամբակը հանձնելու վերաբերյալ, կազմում են չհանձնողների 10–որյա ցուցակներ և ուղարկում համապատասխան ՄՏ Կայան կամ գյուղխորհուրդ՝ անպարտաճանաչ պայմանագիրների նկատմամբ նրդործության միջոցներ ձեռք առնելու համար: Կոլտնտեսությունների և մենատնտեսների կողմից կոնտրակտացիոն պայմանագրերի կատարումն ստուգելու գործի կազմակերպման պատասխանատվությունը դրը-

վում է գործարանների դիրեկտորների և մթերման կայանների վարիչների վրա։ Գործարանների դիրեկտորների և մթերման կայանների վարիչների վրա յե դրվում կոնտրակտացիոն պայմանագրերով նախատեսված արտոնյալ գներով տրվող ապրանքները սահմանված ժամանակին և ճշտիվ վաճառելու պատասխանատվությունը։

63. Մթերման կայանների վարիչները մինչև 1-ը նոյեմբերի խիստ ստուգման են յենթարկում պայմանագրերների պարտավորությունների կատարումը պետության հանդեպ և կոնտրակտացիոն պայմանագրերը չարամտորեն չը կատարողներին պատասխանատվության են յենթարկում ԽՍՀՄ-ի Կենտգործկոմի 1935 թ. սեպտեմբերի 23-ի վորոշման համաձայն։

10. ՀԱՇՎԱՌՄԱՆ ՅԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

64. Մթերման կայանի վարիչը և գործարանի դիրեկտորը բամբակի մթերումների ճիշտ հաշվառումն ու հաշվետվությունը կազմելու համար անձնական պատասխանատվություն են կրում։ Նրանց հետ հավասարապես պատասխանատու յեն մթերման կայանների ու գործարանների ոպերատիվ հաշվառման աշխատողները։ Այս բոլոր անձինք պատասխանատու յեն հաշվառման տվյալների և հաշվառման փաստաթղթերի վերաբերյալ ճշգրիտ կիրառման համար և պետք է անշեղ ղեկավարվեն ԹԵԹԵ Արդ-ոդկոմատի ու Ժողտնտհաշվառման Կենտ. վարչության հրահանգներով ու ցուցումներով։

Բամբակի մթերումների ու վերամշակման ընթացքի վերաբերյալ արդելվում է տեղեկություններ տալ այն կազմակերպություններին և անձանց, վորոնք նախատեսված չեն ԹԵԹԵ Արդ. Ժողկոմատի վորոշմամբ։ Հաշվառման աշխատողները դատական պատասխանատվություն են կրում հաշվառման տվյալների ու սիստեմի մեջ փոփոխություններ մտցնելու վերաբերյալ վորևե մեկի կարգադրությունը կատարելու առթիվ։

ԱՐԽԻՎ

Գլավլիտի լիազոր պ—4209 Հրատ. 4274, տիրաժ 1500, պատվեր 1116։
Հանձնված է արտադրության 9 սեպտեմբերի 1937 թ.
Ստորագրված է տպագրելու 21 սեպտեմբերի 1937 թ.

ՊԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ, ԵՐԵՎԱՆ, ԼԵՆԻՆԻ 65

50

ՀՀ Ազգային գրադարան
NL0936690

1. ABI. 1954.
460
II
28493